**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 28.06.2022թ.**
**N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/30-1» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան « 15 » հուլիսի 2022թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Խ. Ղազարյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և Վեգա ուորլդ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Պողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 28.06.2022թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/30-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրի 1-ին չափաբաժնով նախատեսված 40 հատ օդորակիչներից 5 հատ օդորակիչների, 2-րդ չափաբաժնով նախատեսված 20 հատ օդորակիչներից 12 հատ օդորակիչների, 3-րդ չափաբաժնով նախատեսված 40 հատ օդորակիչներից 5 հատ օդորակիչների մասով **6 035 000 (վեց միլիոն երեսունհինգ հազար)** ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին.

1.1. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ***Դատական դեպարտամենտ*** | ***Վեգա ուորլդ ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1 | Հասցե՝ ք. Երևան, Թումանյան 4/1 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 02704414 |
| Հ/Հ՝ 900011005841 | Հ/Հ՝ 2050022244621001 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Խ. Ղազարյան | Տնօրեն՝ Մ. Պողոսյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

**Հավելված N 1**
**« 15 » հուլիսի 2022թ. կնքված N 1 համաձայնագրի**

*(Հավելված N 3*
*« 28 » « 06 » 2022թ. կնքված*
*N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/30-1» ծածկագրով պայմանագրի)*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Ապրանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հերթով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | |
| | | | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 39714220/504 | 1. Օդորակիչ 12000 BTU | 925 000 | 925 000 | 925 000 | 925 000 | 925 000 | 925 000 | **925 000** |
| 2 | 39714230/503 | 2. Օդորակիչ 18000 BTU | 3 360 000 | 3 360 000 | 3 360 000 | 3 360 000 | 3 360 000 | 3 360 000 | **3 360 000** |
| 3 | 39714240/505 | 3. Օդորակիչ 24000 BTU | 1 750 000 | 1 750 000 | 1 750 000 | 1 750 000 | 1 750 000 | 1 750 000 | **1 750 000** |

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
***Դպրական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011005841
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Խ. Ղազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
***Վեգա ուորլդ ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Թումանյան 4/1
ՀՎՀՀ՝ 02704414
Հ/Հ՝ 2050022244621001
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Ս.Մարգարյան

/ստորագրություն/